



**Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Կառավարութիւնը
ուղերձ յղած է**

**ՄԱԿ-ի Անվտանգութեան Խորհուրդի անդամ եւ Մերի Խաղաղութեան Դաշնագիրը
ստորագրած երկիրներու կառավարութիւններուն**

**Հայաստանի Հանրապետութեան ներքին իրավիճակի եւ Արցախեան հարցի խաղաղ
կարգաւորման խնդիրներու կապակցութեամբ, որուն մէջ մասնավորապէս ըստւած է.**

«Հայաստանի Հանրապետութեան ներքին իրավիճակի կտրուկ սրման խորքային եւ հիմնական պատճառներէն մէկը Արցախեան խնդրի կարգաւորման ինչ-որ նոր տարբերակ մը շրջանառութեան մէջ դնելու հարցն է, այդ թուին՝ տարածքներու յանձնման պայմանով եւ հայ հանրութեան համար չափազանց զգայուն այլ նմանատիպ խնդիրներու առկայութեամբ: Ակնյայտ է, որ այդ ամէնը պիտի չնպաստէ թէ՛ իրապէս զինուած դիմակայութեան անարիւն հանգուցալուծման, եւ թէ՛ Արցախեան խնդրի վերջնական ու արդարացի կարգաւորման:

Յետեւաբար, այս պարագային, մենք կը ցանկանք Ձեր ուշադրութիւնը հրաւիրել այն իրողութեան վրայ, որ Արցախի, Հայաստանի Հանրապետութեան, Մերձաւոր Արեւելքի, Արեւմտեան Հայաստանի հայութեան հիմնախնդիրները կրնան լուծուել եւ պէտք է լուծուին բացառապէս իրաւական դաշտի սահմաններուն մէջ՝ նկատի ունենալով այն բոլոր որոշումները, որոնք կայացուել են 1920-ական թթ. հայութեան ու Հայաստանին վերաբերեալ, սակայն մինչեւ օրս չեն իրականացուել: Ատոնց շարքին են՝ Մերի Խաղաղութեան Դաշնագրի 92-րդ յոդվածի պահանջը Հայաստանի եւ Ադրբեջանի Հանրապետութեան միջեւ սահմանագատման վերաբերեալ, Մերի Խաղաղութեան Դաշնագրի յօդուածները Հայաստանին վերաբերեալ, ԱՄՆ 28-րդ Նախագահ Վուդրո Ուիլսոնի կայացուցած Իրաւաբար վճիռը Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ սահմանագատման վերաբերեալ:

Կը խնդրենք հաշտի առնել, որ Հայաստանի Հանրապետութեան, Արցախի, Մերձաւոր Արեւելքի, Արեւմտեան Հայաստանի հայութիւնը, ինչպէս նաեւ համայն հայութիւնը, իրաւունք ունի արժանապատիւ կեանքի, զարգացման հեռանկարի, եւ ապագայի յոյսի:

Կը խնդրենք նկատի առնել, որ նոր ժամանակաշրջանին՝ 1988-էն ի վեր, Արցախի, Հայաստանի Հանրապետութեան, Մերձաւոր Արեւելքի հայութիւնը դարձեր է թշնամական ծրագիրներու եւ գործողութիւններու թիրախ, այդ շարքին՝ նախադարձական, յարձակումներու, բռնագաղթի, շրջափակման: Աւելին, տարածաշրջանին մէջ յարձակումներու եւ ոչնչացման թիրախ դարձեր են ոչ միայն հայ մարդիկ ու քաղաքացիներ, թաղամասեր ու բնակավայրեր, գիւղեր ու քաղաքներ՝ այլեւ Հայոց քաղաքակրթական արժեքներ, եկեղեցիներ, դպրոցներ, պատմամշակութային ու կրթական նշանակութիւն ունեցող շինութիւններ ու կառոյցներ:

Այո, հայութիւնը եւ Հայաստանը շատ տառապեր են, բայց այդ չի նշանակեր, թէ այդպէս կրնայ անվերջօրէն շարունակուիլ: Արդէն շատոնց ժամանակը հասունցած է տարածաշրջանին մէջ իրավիճակն արմատապէս փոխելու յանուն խաղաղ գոյակցութեան ու բնականոն զարգացման:

Ձեզի ուղղուած այս ուղերձի իմաստն այդ ամենուն մէջ Ձեր դրական, կառուցողական եւ գործուն մասնակցութեան հարցը դիտարկելն է, ու զայն իրականացնելը»:

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Կառավարութեան Լրատուական ծառայութիւն

25.07.2016 թ.